# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար խմելու ջրամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի մայիսի 26-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/26 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Համադրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախատեսված աշխատանքների ծավալների և գնի նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «Փարոս-Գազ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 118,514,720.00 (մեկ հարյուր տասնութ միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 19,752,453.33 (տասնինը միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր հիսուներեք դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:
- Պայմանագրի շրջանակում հուլիսի 14-ին կնքված Համաձայնագիր 1-ի «1. Համաձայնագրի առարկան» մասի 1-ին պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքների ձեռքբերման համար հատկացված 118,514,720.00 (մեկ հարյուր տասնութ միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 19,752,453.33 (տասնինը միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր հիսուներեք դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.»:
- Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակի «Գումար» սյունակի «127,827,594.00» թիվը փոփոխվել է «118,514,720.00»:
- Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ»-ը փոփոխվել և հաստատվել է համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված 1-ի:
- Պայմանագրի շրջանակում հուլիսի 14-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 3 – ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը փոփոխվել և հաստատվել համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի մայիսի 26-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/26 ծածկագրով պայմանագրի կատարման շրջանակում համադրման արդյունքում կատարվող աշխատանքների և ծավալների նվազեցման անհրաժեշտությունը և Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**